Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 նոյեմբերի 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար մետաղապլաստե դռների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/24» ծածկագրով գնման ընթացակարգի 1 և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և 2024թ. ապրիլի 18-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/24-01/182 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված մատակարարման (մուտքի թույլտվություն ստանալուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում) ժամկետները: Մասնավորապես թիվ 3 չափաբաժնով սահմանված դռներից 2-ը մատակարարվել են Պայմանագրի պահանջներին անհամապատասխան, որի մասին Վաճառողը տեղեկացվել է, սակայն մինչ օրս Պայմանագրի պահանջներին չհամապատասխանող ապրանքը չի փոխարինվել: Հաշվի առնելով վերոգրյալը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	04240007	ՀՀ, ք. Արտաշատ, Շահումյան փ., շենք 7/33		Առկա է		Որոշում առ 2024 թվականի նոյեմբերի 21-ի Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/24»